

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ  
ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Մայրանուշ ՄԱՆՎԵԼՅԱՆ**  
ԵԿՏԱ Տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ  
**Ձավեն ՀԱՐՈՅԱՆ**  
Տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր. ՓՄՁ, շրջանառություն, աշխատողների թվաքանակ, վերլուծություն

Ժամանակակից աշխարհում ՓՄՁ ոլորտի զարգացումը ոչ միայն կարևոր է յուրաքանչյուր երկրի տնտեսական կայունության և առաջընթացի համար, այլ հանդիսանում է ժամանակի հրամայական: Այս ոլորտի զարգացումը կենսական նշանակություն ունի հատկապես զարգացող երկրների համար, քանի որ նպաստում է մասնավոր հատվածի ձևավորմանն ու դինամիկ աճին: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում գնահատել այդ ազդեցությունը, իսկ առավել ճշգրիտ պատկերացում կազմելը դժվար կլինի առանց ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծության: Մինչև 2002 թվականը ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալները ամբողջական չէին և չէին կրում համակարգված բնույթ: Իրավիճակը էականորեն փոխվեց, երբ ստեղծվեց Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամը: Վերջինիս ինտերնետային կայքում պարբերաբար ներկայացվում են ոլորտին առնչվող թվային տվյալներ, որոնք թույլ են տալիս դիտարկել ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման դինամիկան:

Այնուամենայնիվ, ՓՄՁ ոլորտի վիճակագրական տվյալների համադրությունը ի հայտ է բերում որոշ խնդիրներ: Մասնավորապես, մինչև 2010 թվականին իրականացրած օրենքի փոփոխությունը, կիրառվում էր փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման հետևյալ մոտեցումը<sup>1</sup>.

ա) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում հինգ մարդը.

բ) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝

- արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում - 50,
- շինարարության և էներգետիկայի բնագավառում - 25,
- գիտության և կրթության բնագավառում - 25,

<sup>1</sup> Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենք, ՀՕ-121, 05.12.2000թ.

- տրանսպորտի, առևտրի և ծառայությունների ոլորտում - 15 մարդը.
- գ) առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում`
  - արդյունաբերության և նյութական արտադրության ճյուղերում - 100,
  - շինարարության և էներգետիկայի բնագավառում - 50,
  - գիտության և կրթության բնագավառում - 50,
  - տրանսպորտի, առևտրի և ծառայությունների ոլորտում - 30 մարդը:

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվեց ՓՄՁ սուբյեկտների հետևյալ դասակարգումը<sup>2</sup>։

1) գերփոքր` առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը,

2) փոքր` առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը,

3) միջին` առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

Բացի կիրառվող դասակարգման էական տարբերություններից, տվյալների համադրելիությանը խոչընդոտում են նաև տվյալների արտածման կիրառվող մեթոդական տարբերությունները: Մինչև 2010 թվականի տվյալներում արտածված է այդ պահի դրությամբ գրանցված բոլոր հարկ վճարողների քանակը (այդ թվում` գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած կամ լուծարման գործընթացում գտնվող), մինչդեռ, սկսած 2010 թվականից, դիտարկվել են միայն գործող հարկ վճարողների տվյալները:


Ելնելով վերոնշյալ խնդիրներից, ինչպես նաև նպատակ ունենալով դիտարկել ոլորտի իրական պատկերը, վերլուծվել են ՀՀ ՓՄՁ ոլորտի 2010-2014թթ. վիճակագրական ցուցանիշերը<sup>3</sup>:

<sup>2</sup> Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ օրենք, ՀՕ-142-Ն, 05.10.2010թ.

<sup>3</sup> ՀՀ ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից տրամադրված վիճակագրական տվյալների հիման վրա հեղինակների կողմից կազմվել են գրաֆիկական պատկերները և աղյուսակը

2015թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործունեություն է իրականացրել 74365 ՓՄՁ սուբյեկտ, ինչը կազմում է ընդհանուր տնտեսական ակտիվ գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների 98%-ը<sup>4</sup>:

**Գծապատկեր 1. ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2010-2014թթ**




Ինչպես ներկայացված է գծապատկեր 1-ում, 2010-2013թթ. արձանագրվել է տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի շարունակական աճ, մասնավորապես՝ 2010 թվականի համեմատ 2011 թվականին աճը կազմել է 15.9%, 2012 թվականին 2011 թվականի համեմատ արձանագրվել է 7.6% աճ, իսկ 2013 թվականին 2012 թվականի համեմատ աճը կազմել է 2.6%: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ չնայած արձանագրված աճին, այդ ժամանակահատվածում աճի տեմպերը կրճատվել են, իսկ 2014 թվականին 2013 թվականի համեմատ հարկ վճարողների քանակը նվազել է:

2014թ. ՓՄՁ ոլորտի գերակշիռ մասը՝ 91.6%-ը կազմել են գերփոքր տնտեսավարող սուբյեկտները, փոքր տնտեսավարող սուբյեկտները կազմել են 6.9%: Ամենափոքր տեսակարար կշիռ ունեն միջին ձեռնարկությունները՝ կազմելով ընդհանուր ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների 1.5%-ը: 2014 թվականին նախորդ տարվա համեմատ ընդհանուր տնտեսավարող սուբյեկտների քանակում գերփոքր սուբյեկտների տեսակարար կշիռը մնացել է անփոփոխ, 0.1 տոկոսային կետով կրճատվել է միջին տնտեսավարող սուբյեկտների քանակը, նույնքան էլ աճել է փոքր տնտեսավարող սուբյեկտների տեսակարար կշիռը: Այս ամենը կարող է ազդակ հանդիսանալ, որ տնտեսավարող սուբյեկտների խոշորացում տեղի չի ունենում:

<sup>4</sup> <http://taxservice.am/Content.aspx?itn=TITaxStatData&pt=parent>

**Գծապատկեր 2. ՓՄՁ սուբյեկտների բաշխումն ըստ մարզերի (2014թ.)**



ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասը՝ 53%-ը, գրանցված են Երևան քաղաքում, 7.4%-ը՝ Կոտայքի մարզում և 6.9%-ը՝ Արմավիրի մարզում: Ամենացածր արդյունք արձանագրվել է Վայոց Ձորի մարզում: Գծապատկերը առավել ակնառու ցույց է տալիս ոլորտի տնտեսավարող սուբյեկտների անհավասարաչափ բաշխման պատկերը: Ուստի անհրաժեշտ ենք համարում ոլորտի խթանմանն ուղղված քայլերն առաջնահերթ իրականացնել հենց ցածր արդյունք արձանագրած մարզերում:


Ըստ ճյուղային բաշխվածության, ՓՄՁ սուբյեկտները գերակշռում են մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում: Այդ ոլորտում ներգրավված է ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր քանակի 58.7%-ը: Սյուս բոլոր ճյուղերում ներգրավված ՓՄՁ սուբյեկտների քանակը ըստ առանձին ճյուղերի չի գերազանցում ընդհանուր ՓՄՁ-ների 10%-ը, մասնավորապես՝ մշակող արդյունաբերության ճյուղում ներգրավված են ՓՄՁ սուբյեկտների 8.7%-ը, կացութային և հանրային սննդի կազմակերպման ճյուղում՝ 5.1%-ը: Առավել ցածր է վերջիններիս քանակը հանքարդյունաբերության ոլորտում, կազմելով ընդամենը 0.5%, ինչը կարելի է բացատրել ճյուղի առանձնահատկություններով:

Հատկանշական է, որ գրեթե բոլոր ճյուղերում 2010-2013թթ. արձանագրվել է ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի աճ, ինչը չի կարելի ասել 2014թ. վերաբերյալ: 2014թ.-ին 2013թ. համեմատ ՓՄՁ ոլոր-

տի տնտեսավարող սուբյեկտների քանակը կրճատվել է դիտարկված 12 ճյուղերից 5-ում: Առավել ակնառու անկում է արձանագրվել փոխադրումներ և պահեստային տնտեսություն ճյուղում՝ 30.8% և գյուղատնտեսության ճյուղում՝ 17.1%: Երկու ճյուղերում նվազումը պայմանավորված է գերփոքր տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի կրճատմամբ, որը չի ուղեկցվել փոքր կամ միջին սուբյեկտների թվաքանակի աճով: Այս հանգամանքը վկայում է, որ տնտեսավարող սուբյեկտները դադարեցրել են իրենց գործունեությունը:

Մյուս կարևոր ցուցանիշը, որը բնութագրում է ՓՄՁ ոլորտը, հանդիսանում է ոլորտում ներգրավված աշխատողների թվաքանակը: 2014թ. ՓՄՁ ոլորտում աշխատողների թվաքանակը կազմել է 370269 մարդ, որը կազմում է հանրապետությունում գրանցված զբաղվածների թվաքանակի 32.6%-ը<sup>5</sup> (2014թ ՅՅ զբաղվածների թիվը եղել է 1133700):

**Գծապատկեր 3. ՓՄՁ սուբյեկտների աշխատողների թվաքանակը (2010-2014թթ)**



2010-2013թթ. տվյալների համադրումը ցույց է տալիս, որ ՓՄՁ ոլորտում զբաղվածների թիվը շարունակական աճ է արձանագրել: 2013 թվականին 2012 թվականի համեմատ ոլորտի աշխատողների թվաքանակն աճել է 28.9%-ով: Միևնույն ժամանակ ՓՄՁ սուբյեկտների քանակն աճել է 2.6%-ով: Այսինքն՝ ՓՄՁ սուբյեկտների քանակի 1% աճը հանգեցրել է ոլորտի զբաղվածների 11.1% աճի: Ի տարբերություն 2010-2013թթ., 2014թ.-ին ոլորտի աշխատողների թվաքանակը կրճատվել է 3989-ով կամ 1.1%-ով:

Համադրելով հանրապետությունում գործող ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների թվաքանակը վերջիններիս աշխատողների թվաքանակի հետ՝

<sup>5</sup> <http://armstat.am/am/?nid=126&id=08015&submit>

ստանուն ենք, որ միջինում 2014թ. 1 գերփոքր սուբյեկտում ներգրավված է եղել 2 աշխատող, 1 փոքր սուբյեկտի աշխատողների թվաքանակը կազմել է 22, իսկ 1 միջին սուբյեկտի աշխատողների թվաքանակը՝ 105:

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ ոլորտի տնտեսվարող սուբյեկտում աշխատողների միջին թվաքանակը կազմում է 5 աշխատող: Համադրելով այդ տվյալները ըստ մարզերի տնտեսվարող սուբյեկտների բաշխվածության հետ՝ նշենք, որ 1 տնտեսվարող սուբյեկտի հաշվով աշխատողների թվաքանակը ամենաբարձրը Երևանում է՝ կազմելով 6 աշխատող, որին հաջորդում են Կոտայքի և Շիրակի մարզերը: Ներգրավված աշխատողների թվաքանակով ամենացածր ցուցանիշն արձանագրվել է Արմավիրում և Տավուշում:

Հատկանշական է, որ Երևան քաղաքի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 35.4%-ը<sup>6</sup>, սակայն Երևան քաղաքում ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է 64%: Այս հանգամանքը փաստում է հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտներում ընդգրկված աշխատողների խիստ անհավասարաչափ բաշխման և Երևան քաղաքում կենտրոնացվածության բարձր մակարդակի մասին:


Ըստ ճյուղերի զբաղվածների թվով առաջատար է մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտը: Համեմատաբար բարձր են նաև մշակող արդյունաբերության, առողջապահության և շինարարության ոլորտներում զբաղվածների թվաքանակները: Դիտարկվել է նաև ՓՄՁ ոլորտի տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր շրջանառության դինամիկան:

ՓՄՁ սուբյեկտների քանակի աճին զուգահեռ, ավելացել է նաև վերջիններիս շրջանառությունը: 2011թ. 2010թ. համեմատ աճը կազմել է 8.8%, իսկ 2012թ. 2011թ. համեմատ՝ 8.5%: Սկսած 2013թ.-ից աճի տեմպը կտրուկ նվազել է՝ նախորդ տարվա համեմատ կազմելով ընդամենը 0.2%, իսկ 2014թ.՝ 0.5%: Հատկանշական է, որ 2014թ. իրացման շրջանառության աճը զուգորդվել է տնտեսվարող սուբյեկտների քանակի նվազմամբ: Այս երևույթը կարելի է բացատրել, եթե շրջանառությունների աճը ճշգրտենք նույն ժամանակահատվածում գրանցված գնաճի ցուցանիշով: Մասնավորապես՝ 2014 թվականին 2013 թվականի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 103%<sup>7</sup>: Արդյունքում կարող ենք փաստել, որ շրջանառությունը ոչ միայն չի աճել, այլ նաև կրճատվել է:

<sup>6</sup> [http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ\\_01.pdf](http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_01.pdf)

<sup>7</sup> <http://armstat.am/am/?nid=126&id=07001>

**Գծապատկեր 4. ՓՄՁ սուբյեկտների շրջանառությունը 2010-2014թթ.(մլն դրամ)**



Ըստ տնտեսվարող սուբյեկտների առանձին խմբերի դիտարկումը ցույց է տալիս, որ գերփոքր և փոքր տնտեսավարող սուբյեկտների շրջանառությունները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են, իսկ միջին տնտեսավարող սուբյեկտներինը՝ նվազել, ինչն էլ հանգեցրել է ընդհանուր ՓՄՁ ոլորտի շրջանառությունների կրճատման: Միաժամանակ petq 1 նշել, որ միջին տնտեսավարող սուբյեկտները, որոնք կազմում են ընդհանուր ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների 1.5%-ը, ապահովել են ընդհանուր շրջանառության 40%-ը:


**Աղյուսակ 1. ՓՄՁ սուբյեկտները բնութագրող ցուցանիշներ**

Գրական վճարողներ	2014թ.			1 տնտեսվարող սուբյեկտի աշխատողների միջին թվաքանակ	1 տնտեսվարող սուբյեկտի միջին տարեկան շրջանառությունը (մլն դրամ)
	Աշխատողների թվաքանակ	Շրջանառություն (մլն դրամ)	Գրական վճարողների թվաքանակ		
Գերփոքր	137268	417251	68117	2,0	6,1
Փոքր	113100	524548	5109	22,1	102,7
Միջին	119901	624135	1139	105,3	548,0
<b>ԸՆԴՀԱՄՈՒՆ</b>	<b>370 269</b>	<b>1 565 934</b>	<b>74365</b>	<b>5,0</b>	<b>21,1</b>

Աղյուսակ 1-ում համադրվել են տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս աշխատողների թվաքանակները և շրջանառությունները: Տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ միջինում 1 գերփոքր կազմակերպության տարեկան շրջանառությունը կազմում է 6.1 մլն դրամ, փոքրը՝ 102.7 մլն դրամ, իսկ միջինը՝ 548.0 մլն դրամ:

Համեմատելով ստացված արդյունքները «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված ՓՄՁ սուբյեկտների դասակարգման հետ՝ ստանում ենք, որ գերփոքր ձեռնարկությունների աշխատողների միջին թվաքանակը 5 անգամ ցածր է օրենքում նշված դասակարգումից, իսկ միջին տարեկան շրջանառությունը՝ ավելի քան 16 անգամ: Փոքր ձեռնարկությունների համար ստանում ենք համապատասխանաբար՝ 2.3 և 4.9, իսկ միջին ձեռնարկությունների համար՝ 2.4 և 2.7:

**Գծապատկեր 5. ՓՄՁ սուբյեկտների շրջանառությունն ըստ տնտեսության ճյուղերի (2014թ. մլն դրամ)**




Տնտեսավարող սուբյեկտների շրջանառություններն ըստ տնտեսության ոլորտների դիտարկելիս, պարզ է դառնում, որ շրջանառության կեսը բաժին է ընկնում մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտին, 12.8%-ը՝ մշակող արդյունաբերությանը և մոտ 9%-ը՝ շինարարությանը: Ամենացածր շրջանառությունն արձանագրվել է մշակույթի և կրթության ոլորտներում, ինչը պայմանավորված է այդ ոլորտների առանձնահատկություններով: Միևնույն ժամանակ առևտրի ոլորտի շրջանառության մեջ առավել բարձր է գերփոքր ձեռնարկությունների տեսակարար կշիռը: Մյուս բոլոր ճյուղերում շրջանառությունների մեծ մասն ապահովում են միջին ձեռնարկությունները:

Գծապատկեր 6-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ բնակչության թվաքանակի համադրությամբ ըստ մարզերի ՓՄՁ-ների բաշխվածությունը խիստ անհավասարաչափ է: Մասնավորապես՝ Երևան քաղաքում գոր-



ծուներություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ապահովում են ընդհանուր ոլորտի շրջանառության 66.3%-ը:

**Գծապատկեր 6.** ՓՄՁ սուբյեկտների շրջանառությունների բաշխումն ըստ մարզերի 2014թ.



Համադրելով այդ տվյալները Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալների հետ՝ ստանում ենք, որ ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների 57%-ն ապահովում են ոլորտի շրջանառության 66.3%-ը: Ամենից ցածր շրջանառություն արձանագրվել է Վայոց Ձորի մարզում՝ 1.2%:

Վերլուծության արդյունքում բացահայտվել և հիմնավորվել է, որ.

- ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների քանակը մինչև 2013թ. աճել է, սակայն 2014թ. նախորդ տարվա համեմատությամբ նվազում է արձանագրվել: Նույն ժամանակահատվածում նվազել է նաև ոլորտի աշխատողների քանակը և շրջանառությունը
- ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտները բաշխված են խիստ անհավասարաչափ՝ կենտրոնացնելով հիմնականում Երևան քաղաքում: Վերջիններս էլ հենց ապահովում են ոլորտի շրջանառության գերակշիռ մասը,
- խիստ անհավասարաչափ է բաշխումը նաև ըստ տնտեսության առանձին ճյուղերի: Տնտեսավարող սուբյեկտները կենտրոնացված են հիմնականում մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտում, որում էլ գերակշռում են գերփոքր տնտեսավարող սուբյեկտները,
- ոլորտում տնտեսավարող սուբյեկտների խոշորացում տեղի չի ունեցել:

**Սայրանուշ ՍԱՆՎԵԼՅԱՆ, Զավեն ԶԱՐՈՅԱՆ**

**Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման դինամիկան  
Հայաստանի Հանրապետությունում**

*Բանալի բառեր. ՓՄՁ, շրջանառություն, աշխատողների թվաքանակ, վերլուծություն*

ՓՄՁ ոլորտի զարգացումը կենսական նշանակություն ունի զարգացող երկրների համար: Ուստի անհրաժեշտ է իրականացնել ոլորտի վիճակագրական տվյալների վերլուծության: Հոդվածում վերլուծվել է ՓՄՁ ոլորտի տնտեսվարող սուբյեկտների քանակների, աշխատողների թվաքանակների և իրացման շրջանառությունների դինամիկան և բացահայտվել ոլորտի տնտեսավարող սուբյեկտների անհավասարաչափ բաշխումը և հիմնավորվել, որ ոլորտում տնտեսվարող սուբյեկտների խոշորացում տեղի չի ունենում:

**The Dynamics of Development of Small and Medium Sized Enterprises' Sector in the Republic of Armenia**

*Key words: micro small and medium-sized enterprises, SME, turnover, number of employees*

The development of the SME sector is of vital importance, particularly for developing countries, as it fosters the development and dynamic growth of the private sector. Therefore it is necessary to assess the impact of SME sector in economy which will be difficult to understand without analysis of relevant data. The article analyzes the changes in numbers of SME sector entities, number of employees and changes in their turnover figures. The analysis of these dynamics leads to the following main conclusions: there is an unequal distribution of entities within regions, the merging of small and medium enterprises' did not take place as predicted.

**Майрануш МАНВЕЛЯН, Завен АРОЯН**

**Динамика развития отрасли малого и среднего предпринимательства в Республике Армения**

*Ключевые слова: Микро малые и средние предприятия, МСП, оборот от реализации, численность сотрудников, анализ*

Развитие малого и среднего предпринимательства имеет жизненно важное значение, особенно для развивающихся стран, поскольку оно способствует развитию и динамичному росту частного сектора. И для того чтобы оценить влияние МСП сектора на экономику, необходим анализ соответствующих данных. В статье анализируются изменения численности субъектов малого и среднего предпринимательства, численность сотрудников и оборот от реализации. В следствии анализа были сделаны следующие основные выводы: неравное распределение лиц МСП между регионами, не соблюдается рост размеров сектора малого и среднего предпринимательства.